

Ոստիկանապետն ու փաստաբանների պալատի նախագահը հանրային վստահությունն են ուզում ամրապնդել

08.02.2012 19:04



Ոստիկանապետն ու փաստաբանների պալատի նախագահը հանրային վստահությունն են ուզում ամրապնդել

Փետրվարի 8-ին ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանը և ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր ոստիկանության և փաստաբանների պալատի միջև համագործակցության մասին: Այս մասին Tert.am-ին տեղեկացրեցին Ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունից:

Հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցել են ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ և փաստաբանների պալատի ներկայացուցիչներ: Վլադիմիր Գասպարյանն ու Ռուբեն Սահակյանը ներկայացրել են ձեռնարկի շարժառիթները, խնդիրները և համագործակցության հեռանկարները: Փոխըմբռնման հուշագիրը նախաձեռնվել և կյանքի է կոչվելու իրավունքի ոլորտի զարգացմանն ուղղված համագործակցության կատարելագործման, ոլորտում արդարության հաստատման և պատկան մարմինների հանդեպ հանրային վստահության ամրապնդման նպատակով:

Ռուբեն Սահակյանը բարձր գնահատելով ոստիկանության նախաձեռնությունը՝ նշել է, որ համագործակցությունը հնարավորություն կտա արագ արձագանքել իրավունքների սահմանափակումներին և վերացնել դրանք:

Վլադիմիր Գասպարյանը Հուշագրի դրույթների կիրարկումը գնահատելով որպես քաղաքացիների, հասարակության հայացք՝ նշել է, որ փոխգործակցությունը բերելու է ոստիկանության գործունեության որակական փոփոխության: «Մեր հասարակությունը արդարության դեֆիցիտ չի հանդուրժում,- ընդգծել է ոստիկանության պետը:- Իսկ երբ քննիչը, փաստաբանը արդարամիտ են և ծառայում են օրենքին, մենք ունենում ենք անուն, ինքնասիրություն և կարողանում ենք ուղիղ նայել միմյանց և քաղաքացու աչքերին»:

Ոստիկանությունից տեղեկացնում են, որ հուշագրով նախատեսված են նորմատիվ իրավական ակտերի

համատեղ մշակում ու ներկայացում իրավասու մարմիններին, արագ արձագանքման միջոցառումներ, վարքագծի կանոնների ապահովում, սեմինարներ, քննարկումներ, գրականության փոխանակում, դիտորդական առաքելության իրականացում: Համագործակցությունն իրականացնելու նպատակով գործելու է վեց անդամից բաղկացած հանձնախումբ, որը կատարված աշխատանքի մասին կես տարին մեկ հաշվետվություն կ'ներկայացնի Պալատի նախագահին և Ոստիկանության պետին: Հանձնախումբն իրավասու է նաև անհրաժեշտության դեպքում հասարակության առջև հանդես գալու հայտարարությամբ: Խնդիրն, ամեն դեպքում, ոլորտի գործընթացների թափանցիկության ապահովումն է, ինչը, կողմերի համոզմամբ, բխում է և՛ քաղաքացիների, և՛ ոստիկանների ու փաստաբանների մասնագիտական շահերից:

Ոստիկանության և փաստաբանների պալատի ղեկավարները վստահեցրել են, որ հետևողական են լինելու աննախադեպ այս ձեռնարկն իրականություն դարձնելու և քաղաքացու իրավունքներն ու շահերը համատեղ ուժերով պաշտպանելու գործում: «Քայլը առաջադիմական է,- հավաստել է Վլադիմիր Գասպարյանը,- և մենք տեր ենք մեր խոսքին, օրենքի գերիշխանությանը, նրան, ինչին կոչված ենք»:

Արարողության ավարտին ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը և ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը ստորագրել են համագործակցության հուշագիրը, որը նույն պահից ուժի մեջ է մտել:

ԱՆ

Փոխըմբռնման հուշագիրը նախաձեռնվել և կյանքի է կոչվելու իրավունքի ոլորտի զարգացմանն ուղղված համագործակցության կատարելագործման, ոլորտում արդարության հաստատման և պատկան մարմինների հանդեպ հանրային վստահության ամրապնդման նպատակով:

20:53 • 08.02.12

<http://tert.am/am/news/2012/02/08/police/>